

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մայիսի 2013թ. N 1

Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին անցկացվելիք
գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման,
անցկացման և նյութերի մշակման ծախսերի
նախահաշվին հավանություն տալու մասին

Լսելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահի՝
Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի գյուղատնտեսական
համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի
մշակման ծախսերի նախահաշվի վերաբերյալ հաղորդումը, հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականի
գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման,
անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին (ըստ հավելված
1-ի՝ պարզաբանումներով), համաձայնելով, որ այն կարող է ըստ
համապատասխան տարիների պետական բյուջեների մասին ՀՀ օրենքների
ենթարկվել փոփոխության, հաշվի առնելով պետական բյուջեից
հատկացումների հնարավորությունները, միջազգային
կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից հնարավոր
տրամադրվելիք դրամաշնորհային ծրագրերի առանձնահատկությունները,
ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին
գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման,
անցկացման և նյութերի մշակման նախատեսված գործիքակազմի
կատարելագործման հնարավորությունները:

Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ տարածքային կառավարման նախարար,
փոխվարչապետ

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի գյուղատնտեսության
վիճակագրության բաժնի պետ

Ա. Ավագյան